ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Ազգային ժողովը ստորև ներկայացնում է իր կարիքների համար զանազան կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15.» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15.-1 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ N1	Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, սակայն ներկայումս առկա են ֆինանսական միջոցներ:
Փոփոխության նկարագրություն՝	Ապրանքի ձեռքբերման նպատակով հաստատվել է ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 8.5, 8.15, 3.1 և 3.3 կետերի հիմքով
Փոփոխության առաջացման պատճառ N 2՝	Պայմանագրի կատարումը տեղափոխվում է պայմանագիրը կնքվելու տարվան հաջորդող բյուջետային տարի:
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագրում լրացվել է նոր՝ 3.2 կետ «Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև 100% կանխավճարի ապահովում, բանկային երաշխիքի ձևով»:
Փոփոխության հիմնավորում՝	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողով

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

25.12.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15.-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ք.Երևան **«25» դեկտեմբերի 2018թ.**

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ)՝ մի կողմից, և «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 25.12.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15.-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով Պայմանագրի 3.1 և 3.3 կետերը՝ Կողմերը որոշեցին ապրանքի ձեռքբերման նպատակով հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը համաձայն՝ կից ներկայացված Հավելված N1-ի:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետը, ղեկավարվելով Պայմանագիրն ի կատար ածելու պահանջով, նկատի ունենալով, որ Պայմանագրի կատարումը տեղափոխվում է պայմանագիրը կնքվելու տարվան հաջորդող բյուջետային տարի (Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում), Կողմերը համաձայնեցին Պայմանագրում լրացնել նոր՝ 3.2 կետ, հետևյալ բովանդակությամբ. «Պայմանագրի գնից՝ մինչև 1566000 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև 100% կանխավճարի ապահովում, բանկային երաշխիքի ձևով»:

2 Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N1 հավելվածը, համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«ԳՈՐԾ-555» ՓԲԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան 10
ՀՎՀՀ 00008519	ՀԷԲ ԲԲԸ, Շահումյան մ/ճ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	163028105837
Հ/Հ 900011020147	01204386
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Տնօրեն՝
ղեկավարի առաջին տեղակալ	Սարդար Ադամյան
Գ. Մխեյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«25» դեկտեմբերի 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15.-1 ծածկագրով պայմանագրի
«25» «12.» 2018 թ. կնքված N1 համաձայնագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հիմնական նախատեսված միջոցառման համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	39141260/502	Զգեստապահարաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1566000	1566000

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020147
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ԳՈՐԾ-555» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան 10
ՀԷԲ ԲԲԸ, Շահումյան մ/ճ
163028105837
01204386
Տնօրեն՝
Սարդար Ադամյան

(ստորագրություն)
Կ.Տ.